# ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-19/1-1/1

ք. Երևան «07» «03» 2019թ.

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Մ.Բաղդասարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ Բի Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների ընթացիկ սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 1731600 (մեկ միլիոն յոթ հարյուր երեսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

**5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 22 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011018513
ՀՎՀՀ 02578338

**Գլխավոր քարտուղար՝**
_______________ Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

**ՍՊԸ-ի տնօրեն՝**
_______________ Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
«07» «03» 2019թ. կնքված
ՀՀ-ՏԿՂՆ-ԳՀԾՁԲ-19/1-1/1 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Ընդհանուր նախահաշվային գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | Ժամկետը |
| 1 | 50111130/1 | Ավտոմեքենաների վերանորոգման ժամանակ օգտագործվող պահեստամասերը պետք է լինեն նոր գործարանային փաթեթավորմամբ:<br>Ընթացիկ վերանորոգման համար կատարողը պետք է տրամադրի 3 ամիս, իսկ կապիտալ վերանորոգումների համար 12 ամիս երաշխիքային ժամկետ:<br>Ավտոմեքենան պետք է սպասրկվի պատվիրատուի պահանջի հիման վրա՝ նախապես օր և ժամ պայմանավորվելով առանց ուշացման: | դրամ | 1731600 | 1 | ք.Երևան | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2019թ. դեկտեմբերի 15-ը: |

***Տեխնիկական բնութագիր**

ՀՀ դրամ

| SU-1 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | 1 չափաբաժին | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) | | | | |
| | 5 տեղ առջևի տանող ա/մ | | | | 4x4 տիպի ավտոմեքենաներ |
| | TOYOTA CAMRY 2.5 GAS 2013թ.VIN-JTNBFYFK103025885 և 2011թ. VIN-JTNBF4FK703005049 | TOYOTA COROLLA 1.6 GAS 2011թ. VIN-JTNBV58E40J158709 և 2010թ. VIN-JTNBV58E50J112631 | PEUGEOT PARS 1.8 2007թ. VIN-NAAN1MAD57E082083 և 2007թ.VIN-NAAN1MAD17E082081 | RENAULT LOGAN 1.4 2015թ. VIN-X7LLSRB2HFH749244, և 2015թ. VIN-X7LLSRB2HFH749135 | LEXUS GX 4.6 GAS 2011թ. VIN-JTJJM7FX405040796 |
| 1 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |

| SU-1 ներառվող ծառայությունների անվանումը | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 2 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 3 | Շարժիչի վերականգնում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 4 | Շարժիչի մասնակի նորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 5 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում | 6000 | 6000 | 4000 | 4000 | 6000 |
| 6 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 7 | Շարժիչի առջևի կափարիչի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 8 | Բաշխիչ լիսեռի կափարիչի հանում և տեղադրում | 6000 | 6000 | 5000 | 5000 | 6000 |
| 9 | Շարժիչի ատամնավոր փոկի փոխում | 0 | 0 | 8000 | 8000 | 15000 |
| 10 | Վառոցքի կոճի փոխարինում | 2000 | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| 11 | Կոմպրեսիայի չափում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 12 | Բաժանարար լիսեռի տվիչի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 13 | Ծնկաձև լիսեռի տվիչի փոխարինում | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 14 | Շարժիչի գլխիկի հղկում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | **2 Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | | | | |
| 15 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 2000 | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| 16 | Յուղի պոմպի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 17 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 18 | Բռնկման կարգավորում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 19 | CO կարգավորում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 20 | Խառնարակի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 21 | Խառնարակի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 22 | Օդի զտիչի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 23 | Սրահի օդի զտիչի փոխում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 24 | Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 25 | Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում | 10000 | 10000 | 10000 | 10000 | 15000 |
| 26 | Բենզամղիչի փոխարինում | 5000 | 5000 | 5000 | 5000 | 8000 |
| 27 | Վառելիքի զտիչի փոխարինում | 5000 | 5000 | 3000 | 3000 | 3000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 28 | Դրոսելային փականի լվացում և կարգավորում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 29 | Դրոսելային փականի լվացում | 4000 | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| 30 | Ներածման կոլեկտորի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 31 | Վառելիքի չափը ցույց տվող տվիչի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | | | | | |
| 32 | Հովհարի փոկի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 33 | Հովհարի  հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 34 | Ռադիատորի հանում և տեղադրում կոնդիցիոների դեպքում | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 35 | Ռադիատորի վերանորոգում | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 |
| 36 | Ռադիատորի հանում,մաքրում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 37 | Թերմոստատի փոխարինում | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 38 | Հովացման հեղուկի փոխարինում | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| 39 | Ջրի պոմպի փոխարինում | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 40 | Ջրի պոմպի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 41 | Ընդարձակող բաքի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 42 | Խլարարի հանում և տեղադրում | 2000 | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| 43 | Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 44 | Սրահի ռադիատորի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 45 | Սրահի ռադիատորի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 46 | Արտածման կոլեկտորի հանում և տեղադրում | 2000 | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| 47 | Ջրի տվիչ փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | **4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | | | | | |
| 48 | Բանվ.կամ գլխ.գլանի հանում և տեղադրում | 0 | 0 | 3000 | 3000 | 0 |
| 49 | Բանվ.կամ գլխ.գլանի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 50 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 51 | Կցորդման ոտնակի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 52 | Կցորդման ճոպանի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 53 | ՓՏ-ի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 54 | ՓՏ-ի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 55 | ՓՏ-ի առանցքակալի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 56 | ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 57 | ԱՓՏ-ի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 58 | ԱՓՏ-ի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 59 | ԱՓՏ-ի առանցքակալների հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 60 | ԱՓՏ-ի կարտերի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 61 | ԱՓՏ-ի ներդիրների հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 62 | ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 63 | ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 64 | ԱՓՏ-ի յուղի փոխարինում | 3000 | 3000 | 0 | 0 | 3000 |
| 65 | ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում | 12000 | 12000 | 0 | 0 | 12000 |
| | 5. Կախոց | | | | | |
| 66 | Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 67 | Տրավերսի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 68 | Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում | 4000 | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| 69 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 70 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 71 | Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 72 | Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 73 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում | 4000 | 4000 | 4000 | 4000 | 0 |
| 74 | Զսպանակի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 75 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 76 | Ներքևի լծակի վռանների տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 77 | Ներքևի լծակի վռանների փոխարինում | 4000 | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| 78 | Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 79 | Միջին ձգանի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 80 | Ճոճանակային լծակի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 81 | Վերևի լծակի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 4000 |
| 82 | Վերևի լծակի վռանի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 3000 |
| 83 | Գնդե հոդակապի փոխարինում | 4000 | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| 84 | Ծայրականի հանում և տեղադրում | 2500 | 2500 | 2500 | 2500 | 2500 |
| 85 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 86 | Առջևի կայունարարի կանգնակի փոխարինում | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 87 | Առջևի կայունարարի վռանի փոխարինում | 2500 | 2500 | 2500 | 2500 | 2500 |
| 88 | Առջևի կայունարարի առջևի վռանի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 89 | Հետևի զսպանակի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 90 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 91 | Հետևի ձգաձողի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 3000 |
| 92 | Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 3000 |
| 93 | Կայունարարի կանգնակի հանում և տեղադրում | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 94 | Հետևի կայունարարի վռանի փոխարինում | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 95 | Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 96 | Անկյունագծային լծակի վռանների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 97 | Անվաբացքի կարգավորում | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 98 | Ընթացամասի յուղում | 0 | 0 | 0 | 0 | 1000 |
| 99 | Պաշտպանիչ վահան հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 100 | Մեղմիչի ոտքի հղկում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 101 | Անվի հեղյուսի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | **6.Ղեկային մեխանիզմ** | | | | | |
| 102 | Ղեկային կալունի հանում և տեղադրում | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 103 | Ղեկային կալունի վերանորոգում | 60000 | 60000 | 60000 | 60000 | 60000 |
| 104 | ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 105 | Ղեկային կալունի փոշեթիկնոցի | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | փոխարինում | | | | | |
| 106 | Ղեկային կալունի ձողի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 107 | Ղեկային կալունի խցուկի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 108 | ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 109 | Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 110 | Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 111 | Հիդրոուժեղարարի փոխրակի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 112 | Նույն կոդիցիոների դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 113 | ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 114 | ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | **7. Արգելակային համակարգ** | | | | | |
| 115 | Գլխ.գլանի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 116 | Գլխ. գլանի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 117 | Վակումային ուժեղարարի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 118 | Վակումային ուժեղարարի հանում,վերանորոգում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 119 | Բանվ. գլանի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 120 | Բանվ. գլանի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 121 | Արգելակային համակարգի օդահանում | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| 122 | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 123 | Հետևի սուպպորտի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 124 | Առջևի սուպպորտի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 125 | Հետևի սուպպորտի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 126 | Արգելակային փոխրակի փոխարինում | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| 127 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 128 | Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 129 | Հետևի կոճղակների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 130 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | 4000 | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| 131 | Հետևի արգելակային սկավառակի | 4000 | 4000 | 4000 | 4000 | 4000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | փոխարինում | | | | | |
| 132 | Առջևի արգելակային սկավառակի հղկում | 4000 | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| 133 | Հետևի արգելակային սկավառակի հղկում | 4000 | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| 134 | Արգելակային հեղուկի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 135 | Արգելակային սեղմակի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 136 | ABS-ի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 137 | ABS-ի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 138 | Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 139 | Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 140 | Թմբուկային կոճղակների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 141 | Ձեռքի արգելակային մեխանիզմի կարգավորում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 142 | Սուպպորտի ուղղորդիչի յուղում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 143 | ABS-ի տվիչի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 144 | Սկավառակների հղկում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | **8.Էլեկտրասարքավորում** | | | | | |
| 145 | Չափիչ սարքերի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 146 | Գեներատորի հանում և տեղադրում | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 147 | Գեներատորի վերանորոգում | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 148 | Գեներատորի իրանի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 149 | Գեներատորի առանցքակալների հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 150 | Մեկնարկիչի հանում և տեղադրում | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 151 | Մեկնարկիչի վերանորոգում | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 152 | Առջևի լապտերի հանում և տեղադրում | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| 153 | Հետևի լապտերի հանում և տեղադրում | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| 154 | Բռնկման կոճղեքի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 155 | Սարքերի պանելի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 156 | Հեռակառավարման համակարգի տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 157 | Կողային ապակու բարձրացման մեխանիզմի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 158 | Կողային ապակու բարձրացման | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մեխանիզմի նորոգում | | | | | |
| 159 | Կողային հայելիների նորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 160 | Կողային հայելիների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 161 | Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 162 | Ապակելվացիչի շարժիչի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 163 | Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 164 | Վառոցքային լարերի հանում և տեղադրում | 0 | 0 | 2000 | 2000 | 0 |
| 165 | Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 166 | Էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 167 | Էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 168 | Էլեկտրական տվիչների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 169 | Էլեկտրական անջատիչների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 170 | Վառոցքի մոմերի փոխարինում | 6000 | 6000 | 6000 | 6000 | 9000 |
| 171 | Կոնդիցիոների լիցքավորում | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 172 | Կոնդիցիոների փոխրակների վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 173 | Կոնդիցիոների փոխրակների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 174 | Կոնդիցիոների վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 175 | Լույսերի կարգավորում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 176 | Կոմպյուտերային ախտորոշում | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 177 | Բեռնախցիկի փականի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 178 | Ազդանշանային համակարգի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 179 | Ղեկային մեխանիզմի էլեկտրական շղթային փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 180 | Ապակու ամբարձիչի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 181 | Սրահի տաքացման համակարգի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 182 | Հակամառախուղային լապտերի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | **9. Այլ ծառայություններ** | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 183 | Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում, գին 1 քառ.դմ-ի համար | 8000 | 8000 | 8000 | 8000 | 8000 |
| 184 | Անիվի հանում և տեղադրում | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| 185 | Անիվի բալանսավորում | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| 186 | Անվահեծի վերանորոգում | 1500 | 1500 | 1500 | 1500 | 1500 |
| 187 | Քարշակի ծառայություն գին 1կմ, համար | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| 188 | Նստատեղի նորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 189 | Դիմապակու փոխում | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 190 | Մեքենայի լվացում | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 191 | Մեքենայի սրահի քիմիական մաքրում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 192 | Մեքենայի շարժիչի լվացում և փայլեցում | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 193 | Ազոտի լիցքավորում | 0 | 0 | 0 | 0 | 0 |

## SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **1. Շարժիչ** | | | | | |
| 1 | Բարձիկ | 30000 | 30000 | 25000 | 25000 | 32500 |
| 2 | Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 3 | Շարժիչի գլխիկի միջադիր | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 4 | Մխոց | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 5 | Ատամնավոր փոկ | 0 | 0 | 25000 | 25000 | 40000 |
| 6 | Ատամնավոր փոկին ձգող մեխանիզմ | 0 | 0 | 10000 | 10000 | 15000 |
| 7 | Շղթա | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 8 | Հիդրոձգան | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 9 | Հրիչ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 10 | Հիդրոհրիչ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 11 | Բաշմակ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 12 | Հանգստարար | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 13 | Թափանիվ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 14 | Թափանիվի պսակ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 15 | Խցուկ բաշխիչ լիսեռի | 8000 | 8000 | 8000 | 8000 | 8000 |
| 16 | Շկիվ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 17 | Շարժաթև | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 18 | Միջադիր | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 19 | Պարազիտային փոկանիվ | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | | | | |
| 20 | Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1լիտր | 4000 | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| 21 | Յուղ շարժիչի սինթետիկ, 1լիտր | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 22 | Յուղի զտիչ | 5500 | 5500 | 5500 | 5500 | 5500 |
| 23 | Յուղի պոմպ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 24 | Յուղի պոմպի շարժաբեր | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 25 | Վառոցքի մոմ | 6500 | 6500 | 5000 | 5000 | 6500 |
| 26 | Ինժեկտորի ֆորսունկա | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 27 | Վառելանյութի մղիչ էլեկտրական | 28000 | 28000 | 18000 | 18000 | 28000 |
| 28 | Վառելանյութի զտիչ | 18000 | 18000 | 18000 | 18000 | 22000 |
| 29 | Աքսելերատորի ճոպան | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 30 | Օդի զտիչ | 9000 | 9000 | 9000 | 9000 | 9000 |
| 31 | Սրահի օդի զտիչ | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 32 | Յուղի տվիչ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 33 | Բաշխիչ լիսեռի տվիչ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 34 | Օդի ծախսի տվիչ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 35 | Թթվածնի տվիչ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 36 | Ծնկաձև լիսեռի տվիչ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 37 | Վառոցքի կոճ | 23000 | 23000 | 23000 | 23000 | 23000 |
| 38 | Վառոցքի կոճի ծայրակալ | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | | | | | |
| 39 | Ռադիատոր | 70000 | 70000 | 50000 | 50000 | 90000 |
| 40 | Ընդարձակող բաք | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 41 | Ռադիատորի փողրակ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 42 | Թերմոստատ | 20000 | 20000 | 16000 | 16000 | 20000 |
| 43 | Ջրի պոմպի թևակ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 44 | Ջրի պոմպ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 45 | Ջրի պոմպի առանցքակալ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 46 | Սառեցման հեղուկ 1 լիտր | 2000 | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| 47 | Ջրի պոմպի սռնանիվ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 48 | Հողովակ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 49 | Փոկ | 17000 | 17000 | 17000 | 17000 | 17000 |
| 50 | Փոկ կոնդիցիոների | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 51 | Կրոնշտեյն | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 52 | Անուր (Խամուտ) | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 53 | Վառարանի ռադիատոր | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 54 | Ջրի տվիչ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | **4.Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | | | | | |
| 55 | Փոխանցման տուփ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 56 | ՓՏ-ի առջևի խցուկ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 57 | ՓՏ-ի հետևի խցուկ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 58 | ՓՏ-ի առանցքակալ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 59 | ՓՏ-ի առաջնային լիսեռ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 60 | ՓՏ-ի միջանկյալ լիսեռ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 61 | ՓՏ-ի եղանիկ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 62 | ՓՏ-ի ատամնանիվ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 63 | Համաժամիչ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 64 | Մուֆտ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 65 | ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 66 | ԱՓՏ-ի զտիչ | 22000 | 22000 | 0 | 0 | 22000 |
| 67 | ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 68 | ԱՓՏ-ի առանցքակալներ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 69 | ԱՓՏ-ի ներդիրներ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 70 | ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 71 | Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր | 5000 | 5000 | 0 | 0 | 5000 |
| 72 | ԱՓՏ յուղ, 1 լիտր | 9000 | 9000 | 0 | 0 | 9000 |
| 73 | ՓՏ-ի առաջնային լիսեռ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 74 | Հերմետիկ | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| | **5. Կախոց** | | | | | |
| 75 | Կրոնշտեյն | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 76 | Ձախ կամ աջ հոդակապ | 40000 | 40000 | 30000 | 30000 | 40000 |
| 77 | Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 78 | Անվակունդ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 79 | Անվակունդի խցուկ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 80 | Անվակունդի ներքին առանցքակալ | 33000 | 28000 | 20000 | 20000 | 33000 |
| 81 | Անվակունդի արտաքին առանցքակալ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 82 | Հետևի անվակունդի ներքին առանցքակալ | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 83 | Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 84 | Ձախ կամ աջ հեղակապի խցուկ | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 85 | Հարվածամեղմիչի թասակ | 30000 | 30000 | 21000 | 21000 | 0 |
| 86 | Զսպանակ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 87 | Առջևի հարվածամեղմիչ | 55000 | 55000 | 50000 | 50000 | 70000 |
| 88 | Հարվածամեղմիչի փոշեթիկնոց | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 89 | Հարվածամեղմիչի վռան | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 90 | Ներքևի լծակ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 91 | Ներքևի լծակի վռան | 9000 | 9000 | 9000 | 9000 | 12000 |
| 92 | Վերևի լծակ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 93 | Վերևի լծակի վռան | 0 | 0 | 0 | 0 | 12000 |
| 94 | Գնդե հոդակապ | 18900 | 18900 | 15000 | 15000 | 18900 |
| 95 | Առջևի կայունարար | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 96 | Առջևի կայունարարի վռան | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 97 | Հետևի կայունարարի վռան | 5500 | 5500 | 5500 | 5500 | 5500 |
| 98 | Հետևի զսպանակ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 99 | Հետևի ցնցամեղմիչ | 50000 | 50000 | 40000 | 40000 | 65000 |
| 100 | Հետևի մետաղաձող (շտանգա) | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 101 | Հետևի մետաղաձող (շտանգա) վռան | 0 | 0 | 0 | 0 | 8000 |
| 102 | Հետևի անկյունագծային լծակ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 103 | Անկյունագծային լծակի վռան | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 104 | Կայունարարի կանգնակ առջևի | 15000 | 15000 | 12000 | 12000 | 15000 |
| 105 | Կայունարարի կանգնակ հետևի | 15000 | 15000 | 10000 | 10000 | 15000 |
| 106 | Անվի հեղյուս | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 107 | Անվի մանեկ | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 108 | Պաշտպանիչ վահան | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | **6. Ղեկային մեխանիզմ** | | | | | |
| 109 | Ղեկային կալուն | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 110 | Ղեկային կալունի առանցքակալ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 111 | Ղեկային կալունի խաչուկ | 17000 | 17000 | 0 | 0 | 17000 |
| 112 | Հիդրոուժեղարար | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 113 | Հիդրոուժեղարարի փոկ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 114 | Հիդրոուժեղարարի վերանորոգման | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կոմպլեկտ | | | | | |
| 115 | Հիդրոուժեղարարի պոմպ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 116 | Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 117 | Ղեկային ձող | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 118 | Ղեկային ձողի ծայրակալ | 14500 | 14500 | 14500 | 14500 | 14500 |
| 119 | Ղեկային կալունի փոշեթիկնոց | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 120 | Ղեկային կալունի խցուկ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 121 | Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 122 | Ճոճանակ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 123 | Ճոճանակի վռան | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | **7.Արգելակային համակարգ** | | | | | |
| 124 | Գլխ. գլան | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 125 | Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 126 | Վակումային ուժեղարար | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 127 | Բանվ. գլան | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 128 | Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 129 | Արգելակային փոխրակ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 130 | Սուպպորտի ուղղորդիչ | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 131 | Սուպպորտի մոնժետ | 2000 | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| 132 | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | 32000 | 30000 | 25000 | 25000 | 35000 |
| 133 | Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ | 30000 | 28000 | 24000 | 24000 | 30000 |
| 134 | հետևի թմբուկայն կոճղակների կոմպլեկտ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 135 | Առջևի արգելակային սկավառակ | 44000 | 44000 | 36000 | 36000 | 50000 |
| 136 | Հետևի արգելակային սկավառակ | 44000 | 44000 | 36000 | 36000 | 0 |
| 137 | Ձեռքի արգելակային ճոպան | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 138 | Ձեռքի արգելակային կոճղակ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 139 | ABS-ի տվիչ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 140 | Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ | 2000 | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| 141 | Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ | 4000 | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| 142 | Ձեռքի արգելակային ճոպան | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | **8. Էլեկտրասարքավորում** | | | | | |
| 143 | Գեներատոր | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 144 | Գեներատորի դիոդային կամրջակ | 28000 | 28000 | 28000 | 28000 | 28000 |
| 145 | Գեներատորի ռելե | 25000 | 25000 | 25000 | 25000 | 25000 |
| 146 | Գեներատորի առանցքակալ | 3500 | 3500 | 3500 | 3500 | 3500 |
| 147 | Ստարտեր | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 |
| 148 | Ստարերի ռելե | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 149 | Ստարտերի ածուխ | 16000 | 16000 | 16000 | 16000 | 16000 |
| 150 | Բենդեքս | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 |
| 151 | Ստարտերի կցորդիչ (ավտոմատ) | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 152 | Առջևի լապտեր | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 153 | Առջևի թարթիչ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 154 | Հետևի լապտեր | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 155 | Հետևի թարթիչ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 156 | Արգելակային լապտեր | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 157 | Լամպ | 9500 | 9500 | 9500 | 9500 | 9500 |
| 158 | Էլեկտրական անջատիչ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 159 | Էլեկտրական տվիչ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 160 | Ապակեմաքրիչ | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 161 | Ապակեմաքրիչի շարժիչ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 162 | Էլեկտրական չափիչ սարք | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 163 | Բռնկման կողպեք | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 164 | Կողային հայելիներ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 165 | Դիմապակի | 50000 | 50000 | 50000 | 50000 | 50000 |
| 166 | Էլեկտրալարերի գլխավոր խուրց | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 167 | Կոնդիցիոների փոխրակ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 168 | Էլեկտրալարերի երկրորդային խուրց | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 169 | Վառոցքային լարերի խուրց | 0 | 0 | 15000 | 15000 | 0 |
| 170 | Էլեկտրաամբարձիչ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 171 | Վառոցքի մոմի ծայրակալ | 5000 | 5000 | 3000 | 3000 | 5000 |
| 172 | Ապակեմաքրիչի շարժիչ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 173 | Դռների կենտրոնական փական | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 174 | Ապակեմաքրիչի հեղուկ 1լ | 1500 | 1500 | 1500 | 1500 | 1500 |
| 175 | Ներկ. լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորոգման համար | 5000 | 5000 | 5000 | 5000 | 4800 |
| 176 | Ղեկային մեխանիզմի էլեկտրական շղթա | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 177 | Ապակու ամբարձիչ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 178 | Հակամառախուղային լապտեր | 0 | 0 | 0 | 0 | 0 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011018513
ՀՎՀՀ 02578338

**Գլխավոր քարտուղար՝**
________________ Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

**ՍՊԸ-ի տնօրեն՝**
________________ Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Կ.Տ

Հավելված N 2
«07» «03» 2019թ. կնքված
ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-19/1-1/1 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50111130/1 | *ավտոմեքենաների ընթացիկ սպասարկման և վերանորոգման ծառայություններ* | - | - | 170000 | 600000 | 600000 | 600000 | 1000000 | 1000000 | 1000000 | 1731600 | 1731600 | 1731600 | 1731600 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Վճարումները կատարվելու են փաստացի մատուցված ծառայությունների հիման վրա, բայց ոչ ավել քան տվյալ ամսվա համար սահմանված գումարից:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011018513
ՀՎՀՀ 02578338

Գլխավոր հաշվապահ՝
________ Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

ՍՊԸ-ի տնօրեն՝
________ Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Կ.Տ

Հավելված 3
«07» «03» 2019թ. կնքված
ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-19/1-1/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

________________________

________________________

գտնվելու վայրը ____________
հհ ____________
հվհհ ____________

Պատվիրատու

________________________

________________________

գտնվելու վայրը ____________
հհ____________
հվհհ____________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

________________________
ստորագրություն

________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

________________________
ստորագրություն

________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«07» «03» 2019թ. կնքված*
*ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-19/1-1/1 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն